

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2017

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 1

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***


Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1

Ըստ նկարի՝ հյուսիսային կիսագնդում տարվա ո՞ր եղանակն է համապատասխանում 2-րդ պատկերին.

- 1) ձմեռը
- 2) գարունը
- 3) ամառը
- 4) աշունը



2

Եթե քարտեզի թվային մասշտաբը 1 : 1 000 000 է, նշանակում է, որ իրական չափերը փոքրացված են.

- 1) մեկ միլիոն անգամ
- 2) հարյուր անգամ
- 3) հազար անգամ
- 4) հարյուր հազար անգամ

3

Քարտեզում երկու կետերի հեռավորությունը 18 սմ է, իսկ իրականում՝ 720 կմ: Այդ քարտեզի մասշտաբը կլինի.

- 1) 1 : 3 600 000
- 2) 1 : 800 000
- 3) 1 : 4 000 000
- 4) 1 : 7 200 000

4

Օրական ռիթմ չէ.

- 1) բրիզների առաջացումը
- 2) լուսասինթեզը
- 3) ջերմաստիճանի օրական ընթացքը
- 4) ամպամածությունը

5

Օդի ամենացածր ջերմաստիճանն անամպ օրերին լինում է.

- 1) կեսգիշերին
- 2) վաղ առավոտյան
- 3) կեսօրին
- 4) երեկոյան

6

Կլիմաստեղծ գործոն չէ.

- 1) գերիշխող քամիները
- 2) տեղի բարձրությունը
- 3) ամպամածությունը
- 4) լանջերի դիրքադրությունը

7

Հյուսիսային լայնության $66,5^\circ$ գուգահեռականի վրա բևեռային գիշեր լինում է.

- 1) ձմեռային արևակայության օրը
- 2) գարնանային գիշերահավասարի օրը
- 3) ամառային արևակայության օրը
- 4) աշնանային գիշերահավասարի օրը

8


Օրվա ընթացքում օդի ջերմաստիճանի չափումներից ստացել են $-3,8^\circ$, $+5,4^\circ$, $+12,1^\circ$, $+18^\circ$, $+24,3^\circ$, $+14,1^\circ$, $+6,6^\circ$, $-0,8^\circ$ ցուցանիշները: Ջերմաստիճանի տատանման օրական լայնույթը կլինի.

- 1) $7,2^\circ$
- 2) $28,1^\circ$
- 3) 10°
- 4) $11,2^\circ$

9

Քարտեզում ո՞ր թվով է նշված բարեխառն կլիմայական գոտին.


- 1) 5
- 2) 2
- 3) 3
- 4) 4



10

Ի՞նչ է պատկերված նկարում.

- 1) անտիցիկլոն հյուսիսային կիսագնդում
- 2) ցիկլոն հարավային կիսագնդում
- 3) ցիկլոն հյուսիսային կիսագնդում
- 4) անտիցիկլոն հարավային կիսագնդում



11

«Օով – կղզի» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) Միջերկրական – Կրետե
- 2) Դեղին – Թայվան
- 3) Սարգասյան – Նյուֆաունդլենդ
- 4) Բալթիկ – Իռլանդիա

12

Տափաստանում ծառային բուսականությունը բացակայում է, քանի որ.

- 1) խոնավության քանակն անբավարար է
- 2) ամռանը ջերմության քանակն անբավարար է
- 3) ձմռանը լինում են սաստիկ ցրտեր
- 4) հողերը բավականաչափ բերրի չեն

13

Բնութագրումով որոշել կլիմայական գոտին.

Կլիմայական այդ գոտում տարվա ընթացքում երկու սեզոն է լավ արտահայտված՝ տաք ու խոնավ ամառ և տաք ու չոր ձմեռ: Ո՞ր կլիմայական գոտին է.

- 1) բարեխառն
- 2) մերձարևադարձային
- 3) մերձհասարակածային
- 4) արևադարձային

14

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Եվրասիան միակ մայրցամաքն է, որի հիմքում մի քանի պլատֆորմ է ընկած:
- 2) Արաբական և Հնդկական պլատֆորմները Գոնդվանայի մասերն են եղել:
- 3) Արևելաեվրոպական (Ռուսական) պլատֆորմը երիտասարդ է:
- 4) Եվրասիայի արևելյան շրջանները Խաղաղօվկիանոսյան գեոսինկլինալում են:

15

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Երկրագնդի առանցքի թեքությունը ուղեծրի հարթության նկատմամբ անփոփոխ է:
- 2) Երկրագնդի վրա մարտի 21-ին ցերեկվա և գիշերվա տևողությունը հավասար են:
- 3) Բևեռների աշխարհագրական դիրքը որոշելու համար բավական է իմանալ միայն մեկ կոորդինատը:
- 4) Բևեռային շրջագծերից դեպի բևեռ շարժվելիս բևեռային գիշերվա տևողությունը նվազում է:

16

«Հարթավայր – դրա տարածքով հոսող գետ» գույգերից ո՞րն է ճիշտը.

- 1) Կենտրոնական հարթավայր – Յուկոն
- 2) Մեծ հարթավայրեր – Սուրբ Լավրենտիոս
- 3) Մերձատլանտյան դաշտավայր – Մակենզի
- 4) Մերձմեքսիկական դաշտավայր – Միսիսիպի

17

«Գետ – ծոց» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) Զամբեզի – Գվինեական
- 2) Միսիսիպի – Հուդզոնի
- 3) Գանգես – Բենգալական
- 4) Ինդոս – Պարսից

18

«Գետ – վտակներ» գույգերից ո՞րն է ճիշտ.

- 1) Վոլգա – Կամա, Ուրալ
- 2) Կուր – Արաքս, Ճորոխ
- 3) Գանգես – Ինդոս, Իրավադի
- 4) Շատ-Էլ-Արաբ – Եփրատ, Տիգրիս

19

Ո՞ր պնդումն է ճիշտ.

Եթե հակումն արևելյան է, ապա իսկական ազիմուտը որոշելիս պետք է.

- 1) մագնիսական ազիմուտը բազմապատկել մագնիսական հակումով
- 2) մագնիսական ազիմուտին գումարել մագնիսական հակումը
- 3) մագնիսական ազիմուտը բաժանել մագնիսական հակումի վրա
- 4) մագնիսական ազիմուտից հանել մագնիսական հակումը

20

Քաղաքն արևելյան երկայնության 45⁰-ի վրա է: Ո՞ր ժամային գոտում է այն.

- 1) 3-րդ
- 2) 2-րդ
- 3) 1-ին
- 4) 4-րդ

21

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Ներքնոլորտում ըստ բարձրության օդի ջերմաստիճանը բարձրանում է:
- 2) Մթնոլորտային նորմալ ճնշումը հավասար է 670 մմ սնդիկի սյան:
- 3) Ջերմաստիճանի տատանման տարեկան լայնույթը մեծ է հասարակածային շրջաններում:
- 4) Անտիցիկլոնը մթնոլորտային բարձր ճնշման մարզ է:

22

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Հյուսիսամերիկյան պլատֆորմի բյուրեղացած հիմքի մերկացած տեղամասերում առաջացել է Կորդիլիերների լեռնային համակարգը:
- 2) Հյուսիսային Ամերիկայի հյուսիսային մասի խոշոր լճերն ունեն սառցադաշտային ծագում:
- 3) Լաբրադոր թերակղզում տունդրայի զոնայի հարավային սահմանը Ալյասկայի համեմատ ձգվում է բավականին հյուսիս:
- 4) Հյուսիսային Ամերիկայի բարեխառն գոտու արևմտյան և արևելյան ծովափնյա շրջանների կլիման ցամաքային է:

23


Ո՞ր շարքի բոլոր աշխարհագրական օբյեկտներն են Եվրասիայում.

- 1) Չինական մեծ հարթավայր, Էլբուրսի լեռներ, Վեներն լիճ
- 2) Դեկանի սարահարթ, Էրեբուս հրաբուխ, Լադոգա լիճ
- 3) Միջինդանուբյան դաշտավայր, Օրիսաբա հրաբուխ, Բալխաշ լիճ
- 4) Մեծ ավազան սարահարթ, Ուրալյան լեռներ, Վերին լիճ

24

Քարտեզում **Դ** տառով **ո՞ր** կղզին է նշված.

- 1) Կորսիկա
- 2) Կիպրոս
- 3) Սարդինիա
- 4) Սիցիլիա



25

Քարտեզում **Ե** տառով **ո՞ր** պետությունն է նշված.

- 1) Ուկրաինա
- 2) Մոլդովա
- 3) Բուլղարիա
- 4) Ռումինիա

26

Ժողովրդագրական անցման չորրորդ փուլին բնորոշ է բնական աճի կայունացումը: Այս փուլը համընկնում է.

- 1) երկրների զարգացման հետարդյունաբերական փուլին
- 2) մինչկապիտալիստական ժամանակաշրջանին
- 3) «ժողովրդագրական պայթյունին»
- 4) երկրների զարգացման արդյունաբերական փուլին

27

Քաղաքային և գյուղական բնակավայրերի խոշոր կուտակումը մեծ քաղաքի կամ քաղաքների շուրջը, որոնք միմյանց հետ կապված են աշխատանքային, մշակութային, կենցաղային, արտադրական և այլ կապերով, կոչվում է.

- 1) ասիմիլյացիա
- 2) միգրացիա
- 3) ագլոմերացիա
- 4) ուրբանիզացիա

28

Բնութագրումով որոշել երկիրը.

Բնակչության թվաքանակով երկիրն աշխարհում առաջին տասնյակում է: Բազմազգ պետություն է: Բնակչությանը բնորոշ է նեղացված վերարտադրության ռեժիմը: Բնակչության խտությունն արևմուտքից արևելք շարժվելիս նվազում է: Ո՞րն է այդ երկիրը.

- 1) Ուկրաինան
- 2) Պակիստանը
- 3) Ռուսաստանը
- 4) Ղազախստանը

29

Երկրի բնակչության թիվը 16,8 մլն մարդ է, գյուղական բնակչության թիվը՝ 6,3 մլն: Ուրբանիզացման մակարդակը կլինի.

- 1) 47,5 %
- 2) 37,5 %
- 3) 72,5 %
- 4) 62,5 %

30

«Պետություն – խոշորագույն քաղաք» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) Բրազիլիա – Բրազիլիա
- 2) Ավստրալիա – Կանբերա
- 3) ԱՄՆ – Վաշինգտոն
- 4) Թուրքիա – Ստամբուլ

31

«Պետություն – պետական կարգ» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) Եմեն – միապետություն
- 2) Ադրբեջան – հանրապետություն
- 3) Սիրիա – միապետություն
- 4) Սաուդյան Արաբիա – հանրապետություն

32

Բնակչության բացարձակ թվի նվազումը (ապաբնակեցումը) առավելապես բնորոշ է.

- 1) Թուրքմենստանին և Ուզբեկստանին
- 2) Ղազախստանին և Իրանին
- 3) Ավստրալիային և Ճապոնիային
- 4) Ռուսաստանին և Ուկրաինային

33

Տրված ցուցանիշներից ԱՖրիկայի երկրները մնացած մայրցամաքների երկրներին գերազանցում են.

- 1) ազլումերացիաների քանակով
- 2) ուրբանիզացման մակարդակով
- 3) բնակչության միջին խտությամբ
- 4) բնակչության բնական աճով

34

Քիմիական արդյունաբերությանը բնորոշ չէ.

- 1) բնապահպանական տեսակետից անվտանգությունը
- 2) հումքային ընդարձակ բազայի առկայությունը
- 3) նոր նյութերի ստեղծումը, որոնք բնության մեջ չեն հանդիպում
- 4) կոմբինացման մեծ հնարավորությունները

35

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Մեր օրերում մեծանում է էներգիայի ոչ ավանդական աղբյուրների օգտագործումը:
- 2) Երկրաջերմային էլեկտրակայանները կառուցում են հրաբխային շրջաններում:
- 3) Համաշխարհային տնտեսությունը վերջնականապես ձևավորվել է 19–րդ դարի վերջին և 20–րդ դարի սկզբին:
- 4) Ճապոնիայում, Շվեյցարիայում, Իտալիայում շատ բարձր է արդյունահանող արդյունաբերության բաժինը:

36

Մեծ Բրիտանիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Տեքստիլ արդյունաբերության խոշորագույն կենտրոնը Բիրմինգհեմ քաղաքն է:
- 2) Սև և գունավոր մետաղաձուլությունը հիմնականում կենտրոնացված է նավահանգստային քաղաքներում:
- 3) Խոշոր քաղաքներից են Մանչեստրը և Մայնի Ֆրանկֆուրտը:
- 4) Գյուղատնտեսության առաջատար ճյուղը բուսաբուծությունն է:

37

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Խոզերի համաշխարհային գլխաքանակի զգալի մասը բաժին է ընկնում Հարավարևմտյան Ասիային:
- 2) Ջարգացած երկրների մեծ մասում գյուղատնտեսության համախառն արտադրանքում մեծ է անասնապահության բաժինը:
- 3) Ոչխարաբուծությունը հիմնականում տարածված է մերձարևադարձային և արևադարձային չոր տափաստանային և կիսաանապատային շրջաններում:
- 4) Համաշխարհային անասնապահության առաջատար ճյուղը խոշոր եղջերավոր անասնապահությունն է:

38

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Օդային տրանսպորտի դերը մեծ է հատկապես ուղևորների փոխադրման գործում:
- 2) Երկաթուղային տրանսպորտը տրանսպորտի ամենաերիտասարդ ու արագ զարգացող տեսակն է:
- 3) Համաշխարհային տրանսպորտային բեռնաշրջանառության մեջ առաջատար դերը պատկանում է ծովային տրանսպորտին:
- 4) Ավտոմոբիլային տրանսպորտի դերը մեծ է հատկապես կարճ տարածությունների վրա բեռների և ուղևորների փոխադրման գործում:

39

Տրված երկրներից ո՞րն է առավել սակավ անտառապատ.

- 1) ԱՄՆ
- 2) Ավստրալիա
- 3) Սաուդյան Արաբիա
- 4) Չինաստան

40

Թուրքիային սահմանակից երկրներ չեն.

- 1) Քուվեյթը և Հորդանանը
- 2) Իրանը և Ադրբեջանը
- 3) Սիրիան և Վրաստանը
- 4) Բուլղարիան և Իրաքը

41

Իտալիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Կլիման մերձարևադարձային միջերկրածովային է:
- 2) Հարուստ է նավթի և բնական գազի պաշարներով:
- 3) Արևմտյան ափերը ողողում են Տիրենյան ծովի ջրերը:
- 4) Հյուսիսում տարածվում է Պադանի դաշտավայրը:

42

Բնութագրումով որոշել պետությունը.

Բնակչության թվով գերխոշոր պետություն է: Հարուստ է ջրային և անտառային ռեսուրսներով: Աչքի է ընկնում երկաթաքարի արդյունահանմամբ և արտահանմամբ: Ո՞ր պետությունն է.

- 1) Բրազիլիա
- 2) Կանադա
- 3) Ավստրալիա
- 4) Իրան

43

Ո՞ր շարքի լեռնագագաթներն են դասավորված բարձրությունների աճման կարգով.

- 1) Միս, Ջիլո, Միփան
- 2) Թոնդրակ, Մարութա, Սրմանց
- 3) Սավալան, Սրմանց, Մուկավետ
- 4) Քաջքար, Առնոս, Նեմրութ

44

«Գետ – վտակ» զույգերից ընտրել սխալը.

- 1) Արևմտյան Եփրատ – Կուր
- 2) Կուր – Թարթառ
- 3) Ճորոխ – Օլթի
- 4) Արաքս – Ախուրյան

45

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Խարբերդի դաշտի մեծ մասը զբաղեցնում է Քեբանի խոշոր ջրամբարը:
- 2) Արաքս գետի հովտում ամենաբարձրադիրը Միջինարաքսյան գոգավորությունն է:
- 3) Արևմտյան Եփրատ և Արևելյան Եփրատ գետերը միախառնվում են Խարբերդի դաշտում:
- 4) Արևելյան Եփրատի հովտում ամենաբարձրադիրը Ալաշկերտի դաշտն է:

46 ՀՀ-ի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Էլեկտրաէներգիա արտահանող երկիր է:
- 2) Վառելիքային հաշվեկշռում ամենամեծ բաժինն ունի բնական գազը:
- 3) Ամենահզոր ջերմային էլեկտրակայանը Երևանինն է:
- 4) ՀՀ-ում գործում է 20-ից ավելի ջրային էլեկտրակայան:

47 ՀՀ քիմիական արդյունաբերության զարգացմանն առավելապես նպաստել է.

- 1) հանքային քիմիական հումքի խոշոր պաշարների առկայությունը
- 2) ատոմային էլեկտրակայանի կառուցումը
- 3) արդյունաբերության բնապահպանական ուղղվածությունը
- 4) սև մետաղաձուլության թափոնների առկայությունը

48 Ո՞ր բնական լանդշաֆտն է տիրապետում Արմավիրի մարզում.

- 1) անտառային
- 2) տափաստանային
- 3) չոր տափաստանային
- 4) կիսաանապատային

49 Ջրագրական ո՞ր միավորը Արմավիրի մարզի հետ կապ չունի.

- 1) Հրազդան գետ
- 2) Այդր լիճ
- 3) Մեծամոր գետ
- 4) Քասաղ գետ

50 Լոռու մարզի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Բոլոր քաղաքները երկաթուղային կայարաններ են:
- 2) Բնակչության բնական աճի ցուցանիշն ամենացածրն է ՀՀ-ում:
- 3) Ուրբանիզացման մակարդակն ամենաբարձրն է հանրապետությունում:
- 4) Մարզի՝ Երևանից ամենահեռու քաղաքը Ալավերդին է:

51

Քարտեզում Դեբեդ գետը n ր տառով է նշված.

- 1) Գ
- 2) Ա
- 3) Բ
- 4) Դ



52

Քարտեզում Սպիտակ քաղաքը n ր տառով է նշված.

- 1) Ը
- 2) Ե
- 3) Զ
- 4) Է

53

«Օգտակար հանածո – հանքավայր» գույգերից ընտրել *սխալը*.

- 1) գունավոր մետաղներ – Կորդիլիերներ
- 2) քարածուխ – Ապալաչներ
- 3) նավթ – Կալիֆոռնիա
- 4) երկաթ – Մեքսիկական ծոց

54

Բուսական ռեսուրսների պահպանմանն ու վերականգնմանն ուղղված միջոցառում է.

- 1) հողերի վերակուլտիվացումը
- 2) արգելոցների ստեղծումը
- 3) հողաբարելավումը
- 4) աքվակուլտուրայի զարգացումը

55

Օրգանական նյութեր սինթեզող կենդանի օրգանիզմները կոչվում են.

- 1) կոնսումենտներ
- 2) պրոդուցենտներ
- 3) ռեդուցենտներ
- 4) պեստիցիդներ

56

Գրել Եվրասիայի ավերը ողողող ծովածոցերի համարները.

- | | |
|------------------|---------------|
| 1) Այասկայի | 5) Գվինեական |
| 2) Կարպենտարիայի | 6) Բենգալական |
| 3) Բիսկայան | 7) Լա Պլատայի |
| 4) Պարսից | 8) Ադենի |

57

Գրել այն կենդանատեսակների համարները, որոնք հիմնականում տարածված են Հարավային Ամերիկայում.

- | | |
|-------------|-------------|
| 1) եքիդնա | 5) պիրանյա |
| 2) մրջնակեր | 6) գրահակիր |
| 3) շիմպանզե | 7) պանդա |
| 4) գորշ արջ | 8) կոնդոր |

58

Տրված են աշխարհի նշանավոր գետեր: Գրել սառցադաշտային սնում ունեցող գետերի համարները.

- | | |
|--------------|-------------|
| 1) Միրդարյա | 5) Միսիսիպի |
| 2) Ենիսեյ | 6) Ամուր |
| 3) Ամուդարյա | 7) Օբ |
| 4) Արաքս | 8) Անգարա |

59

Գրել այն երկրների համարները, որոնք տարածքով գերիառնում են.

- | | |
|-------------|-------------|
| 1) Ուկրաինա | 5) Պակիստան |
| 2) Ճապոնիա | 6) Կանադա |
| 3) Բրազիլիա | 7) Նիգերիա |
| 4) Գերմանիա | 8) Թուրքիա |

60

Գրել Որոտան գետի վրա կառուցված ջրէկների համարները.

- | | |
|----------------|-------------|
| 1) Ողջիի | 5) Տաթևի |
| 2) Արգելի | 6) Ձորագետի |
| 3) Արգնիի | 7) Շամբի |
| 4) Սպանդարյանի | 8) Հրագդանի |

61

Գրել ՀՀ ցեմենտի արտադրության կենտրոնների համարները.

- | | |
|---------------|------------|
| 1) Վաղարշապատ | 5) Գորիս |
| 2) Արտաշատ | 6) Գյումրի |
| 3) Երևան | 7) Հրագդան |
| 4) Արարատ | 8) Արթիկ |

62

Հյուսիսային Եվրոպայի տրված պետությունները դասավորել ըստ հյուսիսից հարավ հաջորդականության.

- 1) Լիտվա
- 2) Էստոնիա
- 3) Ֆինլանդիա
- 4) Լատվիա

63

Արաքսի ձախակողմյան տրված վտակների համարները դասավորել դրանց ջրառատության նվազման կարգով.

- 1) Արփա
- 2) Մեծամոր (Սևջուր)
- 3) Ախուրյան

64

Վայրի աշխարհագրական կոորդինատներն են՝ հս. լ. $41^{\circ}30'$ և արմ. ե. $23^{\circ}30'$:
Որոշել Արեգակի ճառագայթների անկման անկյունը հունիսի 22-ի կեսօրին:

(65-66) Նավը հվ. լ. $12^{\circ}30'$ և արլ. ե. 35° - ի վրա է: Որոշել նրա հեռավորությունը (կմ-ով).

65

Հարավային բևեռային շրջագծից:

66

Հյուսիսային արևադարձից:

(67-68) Քաղաքի բնակչության թիվը 36 000 է, բնակչության բացարձակ բնական աճը՝ 350 մարդ: Եկամտների թիվը 860 մարդ է, մեկնամեկնների թիվը՝ 530 մարդ.

67 Որոշել միգրացիայի մնացորդը:

68 Որոշել քաղաքի բնակչության թիվը 1 տարի հետո:

69

Մթնոլորտի ջերմային պայմանների վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Ջերմաստիճանի փոփոխությունն օրվա ընթացքում կոչվում է օդի ջերմաստիճանի օրական ընթացք:
- 2) Ջերմաստիճանի տատանման օրական լայնույթը օրվա ընթացքում չափումներից ստացված ցուցանիշների միջին թվաբանականն է:
- 3) Ներքնոլորտը տաքանում է Երկրի մակերևույթից, և յուրաքանչյուր մեկ կիլոմետր բարձրանալիս ջերմաստիճանը նվազում է 5⁰-6⁰-ով:
- 4) Անամպ օրերին օդի ամենացածր ջերմաստիճանը լինում է կեսգիշերին:
- 5) Տարվա ընթացքում օդի առավելագույն և նվազագույն ջերմաստիճանների տարբերությունը կոչվում է օդի տարեկան միջին ջերմաստիճան:
- 6) Անամպ օրերին օդի ամենաբարձր ջերմաստիճանը լինում է կեսօրից 2-3 ժամ հետո:

70

ՀՀ բնակչության վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Բնակչության թվաքանակը փոփոխվել է միայն բնակչության բնական շարժի շնորհիվ:
- 2) Սահմանակից Վրաստանի և Թուրքիայի համեմատությամբ ցածր է բնակչության միջին խտությունը:
- 3) Բնակչության խտությունը տեղանքի բարձրության մեծացմանը զուգընթաց նվազում է:
- 4) Տարածքի 70 %-ը բարձր է 1500 մ-ից և այդ բարձրություններում է բնակվում հանրապետության բնակչության կեսից ավելին:
- 5) Արարատյան դաշտի առանձին տեղամասերում գյուղերը ձուլվել են իրար՝ առաջացնելով համատարած տարաբնակեցում:
- 6) Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ծնելիության ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 1990 թ-ին: